

Խ. ԱՔՈՎՅԱՆԻ «ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ*

Պ. Հ. ՀԱԿՈՐՅԱՆ

Առականների և քնարական էջերի սույն հավաքածուն, իբրև կառուցվածքային հարցերի որոնման ու լուծման հետաքրքրական օրինակ, բացառիկ տեղ է գրավում Արթուրյանի գրական ողջ ժառանգության մեջ, քանի որ նա, ընդհանրապես, խորշում էր կաղապարներից և գրական այս կամ այն տեսակին դիմելիս՝ առաջնորդվում էր ո՛չ թե ճարտասանական արվեստի օրենքներով, այլ արվեստագետի բնազդով և ժողովրդական Ars poetica-ի անգրեն սկզբունքներով՝ զգացմունքների պոռթկման և գաղափարների ժայթքման թափով ու թելադրանքով:

Հայտնի է, որ նա ծրագրում էր Աղասու մասին վեպ գրել, բայց առաջին տարբերակն, հակառակ հեղինակի կամքի, ստացվեց մի քնարապետ շտարորոշված երգապատում, որի ծննդյան բծերը տևական մշակումներն իսկ անկարող եղան վերացնել: Սկսել էր գրի առնել մանկապատանեկան տարիների հիշողությունները, բայց շեղվեց դեպի ազգագրություն, խճողվեց և ամեն ինչ անսկիզբ ու անվերջ թողեց: Փորձեց ստեղծել ժողովրդի շրջանում թուրքերեն լեզվով երգվող բայաթիների հայկական համարժեքներ, բայց արդյունքն եղան անհաստատ քնարերգական քանդակները:

Սույն վիճակն է նաև կառուցվածքային խնդիրների բնագավառում: Արթուրյանը «Վերջ Հայաստանի» վերջնական տարբերակի վրա աշխատելիս սկսում է գլուխների ու ենթագլուխների (նաև՝ պարբերությունների) բաժանել վեպը, ինչպես ընդունված էր, բայց իրականում միայն առաջին գլուխն ու երկրորդի սկիզբն են կառուցվածքային լրջամիտ սխտեմի տակ դրվում. երկրորդի մեծ մասը և երրորդն ամբողջությունաբար, նաև «Ձանգի» հավելվածը, մնացել են իբրև շտարանջատված ամբողջություններ՝ մինչև անգամ տարբեր ժամանակներում կատարված դիպվածները և տրամաբանական ներքին կապերով իրար չառնչվող հատվածները միևնույն պարբերության մեջ ներառնելով: Խառն ու պատահական ձևով են դասավորված նաև բայաթիները, առանց բովանդակային ու հանգաբանական կողմերի հաշվառման: Կառուցվածքային ո՛չ մի սկզբունք չի կիրառված գրաբար բանաստեղծությունների զույգ և անտրականներում. երկուսում էլ անտեսված են և՛ ժամանակագրությունը, և՛ թեմատիկան:

«Պարապ վախտի խաղալիքն» այս առումով աննախադեպ երևույթ է: Այստեղ ո՛չ միայն ժանրային շեղումներ թույլ չեն տրված, այլև խստորեն հաշ-

* Սույն հոդվածում հիմնականում բնվում են ժողովածուի կառուցվածքի և Արթուրյանի թարգմանական սկզբունքների մի քանի հարցեր:

¹ «Պարապ վախտի խաղալիքից» կատարված բոլոր մեջբերումները տալիս ենք ըստ հեղինակային ինքնագրի (Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Արթուրյանի դիվան (այսուհետև՝ Ա), № 56), անհրաժեշտության դեպքում դիմելով առաջին (1864) և վերջին՝ ակադեմիական (1948) հրատարակություններին:

վի են առնված գրվածքի բնույթի և հայացված բնագրերի հետ կապված մանրութենքը:

Ինքնատիպ է խորագիրը, բայց և ընտանի՝ ինչպես լուսավորական դարաշրջանի ստեղծագործողների, այնպես էլ ռոմանտիկ քերթողների համար և իր հանգավորված, կրկնակ անուններով՝

Պարապ վախտի խաղալիք
Պարապ մարդու տանու միտք

Հուշում է ընթերցողներին, մասնավորապես հասարակ, գեղջուկ ընթերցողներին կամ «Հարիր-հազարին», թե նրանք այդ գրքում կարող են գտնել ո՛չ միայն ընթերցանության հաճելի ու մատչելի նյութ՝ հետաքրքրաշարժ ու զրվարճալի պատմություններ, այլև կյանքի ցավոտ հարցերի շուրջ խորհրդածելու շարժառիթներ:

Խորագրին հաջորդում է բնագանձ՝ խորիմաստ ու այլաբանական մի երկ-տողով.

Ով շուգենա իր պարկի
Բերանը փակի, թող պառկի...

որ, թվում է, հեղինակի գրական նախասիրություններին է վերաբերում. Արտվյանն ուզում է ասել, թե ինքն հեռու է այն երգիծաբաններից, որոնք կորցնում են շավիի զգացումը և ընկնում գռեհկաբանության ետեհից:

Բուն ժողովածուն բացվում է հեղինակային Հառաջաբանով, որն իր բազմաթիվ զուգահեռներն ունի ժամանակի ռուս և եվրոպական ռոմանտիկ գրականությունների մեջ: Արտվյանն ևս, Հառաջաբանի միջոցով մի կողմից պարզում էր «Պարապ վախտի խաղալիքի» բնույթը, բովանդակությունը և հրապարակ հանելու շարժառիթները, մյուս կողմից՝ կանխավ պաշտպանում իրեն ապագա հնարավոր քննադատությունից. «Թող գիտուն մարդիքը ինձանից չնեղանան. նրանք շատ գրքեր են կարդում, իրանց սիրտը մխիթարում, ամա հասարակ մարդը մեկն էլ ա չունի, որ նա էլ նրանով իր պարապ վախտը՝ ժամանակը անց կիցնի», «Թե գիտուն, խելոք մարդիք ինձ սխալաբանեմ, դու էլ ա ինձ պահիր սիրելի ազգ...» և այլն:

Հառաջաբանին, ըստ առաջին հրատարակության (ժողովածվի հեղինակային ձեռագրի այդ մասի թերթերը չեն պահպանվել), հաջորդել է «Յանկ գրոյսը» կամ բովանդակությունը, իսկ այս վերջինին՝ «էս գրքի ճամփի խորատը» առակը, որն հեղինակի գրական գավառների շարադրման այլաբանական փորձ լինելու հետ միաժամանակ նաև անուղղակի բանավեճ է ժամանակի գրական օրենսդիրների և տնաքույս գիտնականների հետ ու այս վերջինների ստեղծագործական փորձի մերժում.

Քար ու չոլ ընկնիլ ի՞նչ մեկ մեծ բան ա,
Խոր խոր խոսալուցն ո՞վ ինչ կիմանա.
Խոսողին էլ՝ միշտ հասկացող պտի...

Իսկական գրականությունն, այսպիսով, պետք է մատչելի լինի հանրության լայն խավերին և նպաստի նրանց հոգևոր աշխարհի վերափոխմանը.

հակառակ պարագայում պիտի մնա ցանք՝ առանց բերքի ակնկալության, գեղեցկախոսություն՝ անմիտ ու անորոշ։

Թե չէ փուլ՝ քամին կառնի, կտանի...

«Էս գրքի ճամփի խրատին» հաջորդում է բուն ժողովածուն՝ բաղկացած, ըստ էության, երկու մասից՝ առականեր ու բանաստեղծություններ (բայաթիներով հանդերձ), ընայած ինքնագրի համապատասխան էջերում և ցանկի մեջ դրանք միմյանցից տարանջատող որևէ նշան կամ խորագրի չկա։ Բանաստեղծությունները բավականաչափ միապաղաղ են։ Այստեղ գլխավորապես գործ ունենք Արժույթի ու նրա անձնական տրամադրությունները վերաբերող քննարկան հերոսի՝ Աղասու, տառապանքների ու տվալատանքների հետ՝ կարոտ, անտարբեր շրջապատ, չբավարարված սեր։ Արժույթն ինքն էլ մի առիթով ասել է, թե «իրականում սրանք իմ զգացմունքներն են, որոնք ևս վերադրել եմ Աղասուն, որովհետև ես էլ եմ երկար ժամանակ հայրենական հարկից նետվել օտարության մեջ»²։ Նորություն են տոսկ բայաթիները, բայց դրանց բոցն էլ նույն տառապանքներից է բարձրանում։

Առականներն, ընդհակառակը, բազմազան են և դասակարգված են չորս փոքրիկ բաժիններում կամ գրքերում, ինչպես ընդունված էր օտար ու հին առակագիրների մոտ, թեպետև գիրք անվանումը Արժույթը չի՝ օգտագործել։

Անտիկ առակադիրներ Փեդրուսի (աղգություն մը հույն էր, բայց գրում էր լատիններեն) և Բարբիոսի (հոլմայացի էր, բայց հունարեն էր գրում) ժողովածուներն, օրինակ, բաժանված էին, համապատասխանաբար, հինգ և երկու գրքերի։ Ֆրանսիացի Լաֆոնտենը իր առականները համախմբել է 12 գրքում։ Կոխովը՝ ինքը՝ Սրանցից և ո՛չ մեկն այդ գրքերը չի խորագրել, որպեսզի ինչ-որ ձևով բացատրություն չաժանման սկզբունքը կամ ելակետը։

Այլ է խնդիրը հայ իրականության մեջ։ Միջնադարյան մեր նշանավոր առակագիր Մխիթար Գուշին, օրինակ, անժանոթ է «գիրք» անվանումը և նա առակները բաժանել է ըստ պատմվածքի կամ բնույթի՝ «Առակք առասպելականք և բարոյականք» և «Առակք ստեղծականք»³։

Ե. Արեղյանի բացատրությամբ՝ «Բարոյական առակաները (բարոյք, բարք = բնություն բառից, որից և «Բարոյախօս» գրքի կոչումը) առնված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ բնական կամ բնավ չունեն գործողություն։ Առասպելական առականների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին, իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առականներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են»⁴։

² Ա Ն՝ 65, Թ. 12բ (հմտ. և. Արժույթ, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ Ե), հ. VII, Երևան, 1956, էջ 376 և 392)։

³ Մխիթար Գուշի առականների ամբողջական ու կատարյալ հրատարակությունը իրականացրել է բանասեր Էմ. Պիվադյանը (ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, Երևան, 1951), որից և օգտվել ենք։ Նրա մեկնաբանմամբ՝ Բարոյական կոչված առականներում Մխիթար Գուշը վերցնում է գործող անձանց հատկություններից հանրածանոթները միայն, իսկ Առասպելական, մասամբ էլ Ստեղծական առականների մեջ պատկերում է այնպիսի գործող անձեր, որոնց անունն արդեն ընդհանրացած համբավ է ակնարկում, ինչպես աղվեսը՝ խորամանկություն... և այլն (էջ 24)։

⁴ Մ. Արեղյան, Հայ միջնադարյան առականներն և սոցիալական հարաբերությունները նրանց մեջ (ՀՍՍՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Երևան, 1935, էջ 13)։

Իր մշակած ու փոխադրած առակները տարանջատելիս՝ Արուսյանն, անկասկած, հետևել է ազգային ավանդներին, պահպանելով առակախմբերի հայկական անվանումների տարատեսակները՝ «Առասպելը» և «Ասացվածք բնահայտք» ինքնահարմար հորինված» (որոնք մոտավորապես նույնն են, ինչ Մխիթար Գոշի «Առակք առասպելականք և բարոյականք», «Առակք ստեղծականք»), ժողովածվի մեջ ներառելով միայն «առասպելական» և «ստեղծական» առակները, մի կողմ թողած, որ Մխիթար Գոշի առակները գրված են արձակ, իսկ Արուսյանինը՝ կաֆոնտոնի, Կոիլովի և այլոց նման՝ ոտանավորով:

Բաժիններից առաջինը, որ, ինչպես հիշեցինք, խորագրված է «Ասացվածք բնահայտք՝ իճեհաճաւմաւ ճօրհնված», ընդգրկում է հետևյալ տասներկու առակները կամ բարոյախոսական այլաբանությունները.

ա. Լոռցիք [1—2. Ֆորս անելիս: 3—4. փեղի գնալիս]

բ. Մոլլա Մասրադնի իշի քուտակը

գ. Մոլլա Մասրադնի պղինձը

դ. Զարմանալի մարդիքը

ե. Մոլլա Մասրադնի ճաշը

զ. Երկաթակեր մուկն ու աղքատ հարուստը

է. Հացակեր փեշը

ը. Մառերն ու Կացինը

թ. Զրդրիսը (բամբակի հունդը հանելու հաջաթ)

ժ. Բաքմազ (բադազ) ծախողն ու Սալգատը

ժա. Զրագով ման դալը

ժբ. Զու գողացողը

Նրկորդ բաժինը խորագրված է «Առասպելը» և ընդգրկում է հաջորդ տասնմեկ առակը.

ժգ (ա). Ժանդ փուշը

ժդ (բ). Ֆորթն ու խոզը

ժե (գ). Էշն ու Շունը

ժզ (դ). Սոխն տու Սխտորը

ժէ (ե). Աղվեսն ու Գելը

ժը (զ). Աղի գնացող աշառը

ժթ (է). Բարդին (չինարին) ու Վազը

ի (ը). Էշն ու Զին

իա (թ). Խոզն ու Եզը

իբ (ժ). Մշեցի Հայն ու ոսկոռի փեշքաշը

իգ (ժա). Էշն ու Բլբլուլը⁵:

Հեղինակային ինքնագրի ուղագիր զննությունը ցույց է տալիս, որ առաջին երկու բաժիններն սկզբնապես հավասար թվով առակներ են ունեցել (11), և «Մառերն ու Կացինը» հետագայում է մտցվել առաջին բաժնի մեջ, համապատասխան էջում ազատ մնացած տարածությունն օգտագործելու համար, ըստ սրում՝ առակի վերջին երկու տողերն էլ գրված են 21 բ թերթի աջ լուսանցքում: Հօգուտ հիշյալ վարկածի է խոսում նաև «Մառերն ու Կացինը» առակի գրչու-թյունը, որն Արուսյանինը լինելով հանդերձ՝ թանաքի գույնով և տառերի գծա-

⁵ Ի դեպ, Ի. Ա. Կոիլովի առակների երկրորդ գիրքն ևս ավարտվում է «Осел и Соловей»-ով:

դրման ոճով խիստ տարբերվում է ինչպես նույն էջի առաջին կեսից, այնպես էլ նախորդ ու հաջորդ էջերից:

Մինչդեռ «Ասացվածք» խորագրի տակ համախմբված առակների ու առականման չափածո զրույցների հերոսը մարդն է, իսկ քննության առնվածը՝ նրա բնավորության հոգի կողմերն ու ստոր արարքները, որոնք պատճառ են դառնում շարիքի ու ողբերգության, «Առասպելքի» հերոսները կենդանական ու բուսական շխարհի ներկայացուցիչներն են, և այլաբանությունների ձևով են միայն հրապարակ հանվում հանրային կյանքի հակասություններն ու արատները:

Այս սկզբունքից և՛ առաջին, և՛ երկրորդ բաժիններում Արուսյանը շնորհիվ է մի-մի անգամ, այն էլ, թվում է, պատահականորեն: Առակների վերնագրերի սյարգ թվարկումից անգամ ակնհայտ է դառնում դա: Առաջին բաժնի 12 առակներից 11-ի գլխավոր, գործող անձը մարդն է ու սոսկ մեկի մեջ («Մառերն ու Կացինը») հանդիպադրված են այլաբանական կերպարներ, հանձին ծառերի ու կացնի, իսկ երկրորդ բաժնի 11 առակներից նույնպես միայն մեկում բույսերի ու կենդանիների փոխարեն գործում է մարդը («Մշեցի Հայն ու ոսկոռի փեշքաշը»):

Թե ինչու է «Մառերն ու Կացինը» առակը հայտնվել առաջին բաժնում, երբ նրա օրինական տեղն երկրորդում պիտի լիներ, մասամբ բացատրվում է վերելում մեր ասածով, իսկ ինչ վերաբերում է «Մշեցի Հայը...» առակին, շատ հնարավոր է, որ հետագայում, ինչ-ինչ պատճառով՝ առակներից մեկ-երկուսն օտարելով ժողովածվի երկրորդ բաժնից և ձեռքի տակ նույն ծավալի ինքնուրույն առակ չունենալով, Արուսյանը տեղադրել է բաց մնացած տարածության փոխով վաղուց հորինված առակներից մեկը, խորամուկ չլինելով, որ դրանով իսկ խախտում է այնքա՛ն լավ մշակված ու իրականացված իր ծրագիրը:

Երկու բաժիններում ամփոփված այս քսաներեք առակներից ու առակատիպ զրույցներից և ո՛չ մեկը, չնայած ավանդական առակագրության ոճերի ու կերպարների օգտագործման, իսկ առանձին դեպքերում էլ՝ օտար զուգահեռների առկայության, թարգմանություն կամ փոխադրություն չէ, այլ հաջակական կամ՝ ընդհանուր արևելյան ծագում ունեցող ժողովրդական առակների ու զրույցների գրական մշակում, ընդ որում, էթե որևէ մեկն էլ ունի հայ ու օտար զուգահեռներ, ապա նկատի են առնվել բացառապես հայկականները կամ «մեր խալխի խոսած բաները», որոնք թեպետև հեղինակի հավաստմամբ՝ «ավելի ուրախության համար են գրված»⁶, սակայն հրապարակ են հանում դառ ճշմարտություններ և տալիս ուսանելի դասեր:

Արուսյանի ողջ ստեղծագործությունն, ընդհանրապես, ներծծված է ժողովրդական ոգով ու մտածողությամբ, սակայն ժողովրդական պատումներն ու բանահյուսական նյութերն ամենից առատ այս բաժիններում են օգտագործված, ընդ որում ո՛չ թե իբրև հում նյութեր, այլ վերամշակված ու նոր որակ դարձած, իբրև հայ նոր գրականության նոր տեսակ՝ ժամանակի կյանքի մակերևույթների ու տեղատվությունների հետևանքով մարդկային բնավորության մեջ երևան եկած փոփոխությունների հաշվառմամբ և արդիականացրած բարոյախոսությամբ:

Մի դեպքում նա, թեպետև բարեմտորեն, ծաղրում, սակայն անկեղծորեն կարեկցում է տգիտության մեջ խարխափող գեղջուկներին իրենց բնական միա-

⁶ Խ. Արուսյան, Պարապ վախտի խաղալիք, Տփղիս, 1864, էջ 04.

մտության համար, մյուս դեպքում՝ մատը գնելով ազգի միտքն ու հոգին աղարատող և առաջընթացը կասեցնող վերքերի վրա, բարոյական ազնվացման ու զգաստացման համար օգտաշահ խորհուրդներ ու դաստիարակիչ օրինակներ է տալիս, վերջապես, այլ դեպքերում էլ՝ հրապարակ հանելով հասարակական շարիքը, անոգոք դատավճիռ է կարգում շարագործների ու հարստահարիչների վրխի, ազգին համախմբվելու կոչ անում, որոնց գեղեցիկ, ալլաբանական արտահայտություններն են «Ժանդ վուշը» և «Մառերն ու Կացինը» առակաները:

Ճանաչված բանագետ Ա. Ղանալանյանը վաղուց ցույց է տվել, թե որպիսի անգերազանց վարպետությունով օգտվելով բանահյուսական նյութերից, Աբովյանը կարողանում է ստեղծել նոր որակ՝ դրական առակ կամ հանգամանոր զվարճախոսություն, միանգամայն հարադատ ժողովրդական ստեղծագործության ոգուն: Նրա մատնանշած այդօրինակ գործերից է նաև վերևում հիշված «Մառերն ու Կացինը» առակը, որի ծնունդ տվողը՝ «Մառը գանգատ զնաց Աստծու մոտ կացնի ձեռից, որ իրան կոտորում ա, ասաց՝ կոթը քեղանից ա» հանրահայտ առածն է, իբրև արտահայտություն ժողովրդի ինքնագիտակցության զարթոնքի⁷, որ տվյալ դեպքում նաև Աբովյանի շահախնդրության առարկան էր: Բայց ո՛չ միայն հիշյալ առածը, «Մառերն ու Կացինը» առակն ունի նաև իր գրական հնագույն զուգահեռը, ավելի ճիշտ՝ գերհամառոտ գրառումը՝ վաղնջական ժամանակներից եկող, երբ մեր առաջին թարգմանիչների ձեռքով հայերենի էին փոխադրվում հիկարյան բարոյախոսական հորդորներն ու խրատները: Ահա՛ այդ ուշագրավ հուշարձանի մեջ (պատժիչ խրատների բաժնում) արձանագրված է.

«Օղորդ ինձ, որդեակ, որպէս ծառն, որ կտրէին: Եւ ասէր ծառն. Թե ո՛չ էր յինէն ի ձեռին քում, ո՛չ կարէիր յաղթել ինձ»:

Այլ ասեցեալ. «Որդեակ, եղեր ինձ որպէս կացին, որ կտրէր զծառն: Եւ ասէր ծառն. Եթէ յինէն չէիր, ինձ յաղթել ո՛չ կարէիր»⁸:

Այս նույն նյութն ունենք նաև «Բարուախօսում», իսկական առակավոր հանդերձանքով. «Հիւսուներ մտան ի մայրիս և սկսան կոտորել զծառ և զտունկ. և նոքա յառաջելով ասեն. զինչ է այս, զոր գործեն ընդ մեզ: Եւ նոճին ասէ. Վայ է մեզ, ով եղբարք իմ, զի ի մեզանէ [է], որ կտրէ զմեզ. զի կոթն ի մայրոյս է»: Ապա նաև դրանից բխեցված հնօրյա բարոյախոսությունը. «Յուցանէ, թէ՛ ով մարդ, մի տուր դու ի քէն կամաւ զէն սատանայի, որ գայ և նովաւ սպանցէ զքեզ ծուլութեամբ կամ ագահութեամբ կամ հպարտութեամբ»⁹:

Ինչ խոսք, որ մեր առաջ է արժանական առակի ծնող-նախօրինակը՝ հայ թարգմանչի ձեռքով խմբագրված, որ հետո անցնում է ժողովրդին, իսկ ավելի ուշ՝ վերագրվում նաև Վարդան Այգեկցուն և տպագիր ու ձեռագիր ժողովածուների միջոցով լայն տարածում գտնում հայ հողում:

Հայտնի է, որ «Խիկարը» Աբովյանի զայրույթը շարժած՝ «Պղնձե քաղաքի պատմության» մշտական ուղեկիցն է եղել մեր մատենագրության պատմության

⁷ Ա. Ղանալանյան, Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941, էջ 39:

⁸ «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ», աշխատասիրությամբ Ա. Մարտիրոսյանի, գիրք Ա, Երևան, 1969, էջ 122, № 15 և 169, № 12ա, նաև՝ էջ 215, № 30:

⁹ Քաղված է Բեռլինի կայսերական մատենադարանի հայերեն № 80 (հին՝ 273) ձեռագրից՝ «Վարդան վարդապետի ասացեալ Առակ Բարուախօսք», ԺԴ, Հրատարակված է՝ И. Марр, Сборники притч Вардана, մասն 9, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 99: Այլ տարբերակ՝ մասն Բ, էջ 123, Ժէ:

մեջ: Հնարավոր է միանգամայն, որ «Էներք Հայաստանի» Հառաջարանը գրելիս, մինչ Արքայանը ջանում էր ըմբռնել, թե ինչու «կարդալ չսիրող մեր ազգը... Պղնձե քաղաքի հիմար դիրքը ձեռնհաս էր ման ածում»¹⁰, երբ նոր ժամանակների սղուն ու առաջադրած հարցերին այն չէր համապատասխանում, ուշադրություն դարձրած լիներ նաև վերոհիշյալ հատվածի վրա և հետագայում նորանից բխեցներ իր նոր առակը նոր բարոյախոսությանը, որ միանգամայն տարբեր էր հնից. այնտեղ՝ մեղանշական կյանքից խուսափելու հորդոր, այստեղ՝ շարին համընդհանուր ջանքերով դիմագրավելու խրախույս:

Ժողովրդական նյութերի մշակումներն են նաև «Լուռցիք» շարքն իր չորս սրվագով, Մուլա Մասարազնի վերաբերյալ պատմվող շափածո զրույցները, «Երկաթակեր մուկն ու Աղքատ հարուստը», «Հացակեր փեշը», «Չղրեխը», «Մշեցի Հայն ու ոսկոռի փեշքաշը»: Ժողովրդից են լիով առնված ու մշակված նաև մյուս առակները, որոնց մի մասը արձանագրված են դեռևս XII—XIII դդ. գրողներ Մխիթար Գոշի և Վարդանի դործերում: Դրանցից են՝ «Զու գրացողը» (հմմտ. Վարդանի «Ալրի և գող տղայ»), «Ֆորթն ու խոզն» (հմմտ. նույնի «Կոզեռն և յւանակ և խոզն»), «Աղվեսն ու Գելը» (հմմտ. նույնի «Աղուէս և թղթատար գայլ»), «Սոխն ու Սխտորը» (հմմտ. Գոշի Մէ առակը) և այլն¹¹:

Քնպետ կարծիք կա, որ այս առակներն իբր «գրված են Վ. Այգեկցու» առակների «հիման վրա», որ նրանց «սյուժեն վերցված է Վ. Այգեկցուց», և Վարդանի ու Գոշի առակների մեջ էլ, իսկապես, արքայանական հորինվածքներն իրենց զուգահեռներն ունեն, բայց վերջին շուրս առակները (Ժբ, Ժդ, Ժը, Ժէ) մշակելիս Արքայանն աչքի առաջ է ունեցել ոչ թե գրքային տարբերակները, այլ XIX դ. առաջին տասնամյակներին հայ միջավայրում դեռ շրջող բուն ժողովրդական, անգիր պատմները: Այս է հավաստում նաև միջնագրյան հայ առակների պատկանելի հետազոտող Նիկողայոս Մառը. «Մենք մտադիր չենք հետևելու մեր հուշարձաններին (իմա՝ Վարդանյան առակներին—Պ. Հ.) ծավալմանը, այսինքն՝ նրանց թողած ազդեցությունը հայ ժողովրդական բանահյուսության կամ նոր գրականության ստեղծագործությունների վրա: Արքայանի «Պարսպ վախտի խաղալիք, պարսպ մարդու տանու միտք» (Թիֆլիս, 1864) ժողովածվի մի քանի առակներն ականատես զուգահեռներն են մեր հուշարձաններին ալլաբանությունների, ինչպես օրինակ՝ «Ֆորթն ու խոզը»... և «Աղվեսն ու Գելը»... բայց հագելի թե դրանք բանաստեղծական վերապատման լինեն մեր «Կոզեռն և յւանակ և խոզն» և «Աղուէս և թղթատար գայլ» գրքային առակների, որոնցից հատկապես առաջինն իր գործող անձանց կազմով (կով, հորթ և խոզ) հարում է հնդկական խմբագրությանը»¹²:

Վիճարկել այս ճշմարտացի վճիռը ինքնըստինքյան ավելորդ է:

Երրորդ և չորրորդ բաժինների էությունը բավականաչափ պարզ է և վերլուծումների կարիք չի զգում: Եթե առաջին երկուսում ամփոփված էին Արքայանի ինքնուրույն առակներն ու չափածո զրույցները, ապա վերստին նույն խո-

¹⁰ Ե III, էջ 4:

¹¹ Տե՛ս բանասեր Աս. Ասատրյանի՝ այս առակներին տված մեկնաբանումները Ե II-ում, որոնք շատ կետերում համընկնում են այլոց դեռ 1934 թ. գրածներին: Աղվեսագրքի առաջին հրատարակության մեջ կան «Ալրի և գող տղայ» և «Աղուէս և թղթատար գայլ» (H. M a p p, նշվ. աշխ., մաս Ա, Ս. Պետերբուրգ, 1899, էջ 4):

¹² H. M a p p, նշվ. աշխ., մասն Ա, էջ 524:

բարձրորով («Առասպելք», «Ասացվածք») երրորդ¹³ և չորրորդ բաժիններում տեղավորված են թարգմանությունները, ընդ որում ո՛չ թե բառացի, ստրկական. այլ՝ բարձրաթեք, ստեղծագործական՝ երբեմն փոքրիկ հավելումներով ու աննշան սղումներով, երբեմն էլ վերակրկենկով ու ծավալվելով, հայ գեղջուկ ընթերցողի հետաքրքրությունների ոլորտը նկատելի թունենալով: Արժվանյան ինքն է խոստովանում այդ՝ գրելով. «Թարգմանածներս էլ՝ էնպես եմ դուս բերել, որ մեր խալիսի սրտովն ըլի»¹⁴,

Քանակով ու ծավալով վերջին երկու բաժիններում ընդգրկված նյութերն ավելի համեստ են:

Երրորդ բաժինը (խորագրված է «Ասացվածք») բաղկացած է ընդամենը հինգ տռակատիպ, չափածո պատմվածքից կամ բարոյախոսական այլաբանություններից:

Իդ (ա). Խանը

Իե (բ). Բաղդատի ճամփորդ էջը

Իզ (գ). Քոռերը

Իէ (դ). Արաբեքը

Իը (ե). Ծգնավորն ու Արջը

Վերոհիշյալներից «Խանն» ու «Քոռերը» թարգմանություն են հեմնիցներից («Барон»¹⁵ և «Слепцы»), իսկ «Արաբեքը» և «Ծգնավորն ու Արջը»՝ Կռիլովից («Обоз» և «Пустынный и Медведь»): Զի՛ պարզված միայն իե առակի աղբյուրը, որն օտար հեղինակի՝ Արևելքին նվիրված ինչ-որ չափածո զրույց է հիշեցնում¹⁶, Որ այս վերջինը («Բաղդատի ճամփորդ էջը»), ուր քննադատվում է կրթության ու դաստիարակության հին եղանակը և այլաբանորեն պատկերվում հոգևորականների ու մուլանների ձեռքին անմեղ երեխաների կրած տառապանքները, ուսում, որ կտրված էր առօրյա կյանքից և աբստինական խնդիրներով չէր ղբազեցնում աշակերտների միտքն ու հոգին,— թարգմանություն է օտար հեղինակից և ո՛չ ինքնուրույն հղացում, պարզ երևում է ներքոհիշյալ արտահայտություններից, որոնք հայի մտածողությանը խորթ են, մասամբ և՛ անհասկանալի:

— Մեկ էջ ուներ մեր Մուսուրմանը (տող 5)

— Անվանի Սադիկն էսպես է գրում (տող 31)

— Ա՛յ իմ շնորհալի առեածաղիկ (տող 357)

— Թարաքյամբինն ոտանավորով

Ու ասոքեվար՝ դա (իմա՛ էջը) արձակ գրով

Կարող է խոսիլ, շնորհքը հայտնիլ... (տող 383—385) և այլն:

¹³ Ի դեպ, Արժվանյան այս երրորդ բաժինն սկզբնապես, կարծես թե, մտադրվել է վերնագրել «Խորատարանություն» ու այդպես էլ գրել, բայց հետո բառը քերել է անընթեռնելիության աստիճան (հետքն երևում է ԱՆ 56, Թ. 42ա-ի վրա) և ներթելում ավելացրել. «Ասացվածք»:

¹⁴ Խ. Արժվանյան, Պարապ վախտի խաղալիք, էջ 04:

¹⁵ Խեմնիցների «Барон»-ն էլ թարգմանություն է Քրիստիան Ֆյուրխտեգոտ Գեյլերտի (1715—1769) „Der baronisierte Bürger“-ի:

¹⁶ Հիշյալ առակների օտար աղբյուրները մատնանշվել են դեռ 1934 թ., ապա նույնը վերստին հավաստել է Աս. Ասատրյանը՝ Ե II-ին կցած իր ծանոթագրություններում (էջ 360—362), «Թարգմանության» կողքին «ստեղծագործական» որոշիչն ավելացնելով, որն ավելի համապատասխանում է իրերի դրությունը:

Իսկապես էլ, հայ բազմադարյան գրականության ու բանահյուսության ինքնուրույն էջերում ո՛չ մի տեղ չենք հանդիպի, որ մահմեդականին կամ այլադավանին մուսուլման կոչեն, որ պարսիկ բանաստեղծ Սաֆուն գերագույն իմաստուն ու հեղինակություն հռչակեն, որ գեղեցկությունը կամ սլացիկ հասակը համեմատեն արևածաղկի հետ, կամ էլ արձակ խոսել արտահայտությունը գործածեն, մինչդեռ՝ դրանց կիրառությունը ուսումնասիրության մեջ ու դրոշմների երկերում՝ Ֆոնվիզինից մինչև Պուշկին, հաճախ է հանդիպում:

Պիտի ստվարացվեր, արդյո՞ք, այս երրորդ բաժինը ևս և հասցվեր մյուս երեքի ծավալին (10—12 առակ), դժվար է ասել, թեպես ժողովածվի ներքին ստորաբաժանումն այդ է հուշում:

Վերջապես, շորորոդ բաժնում, «Առասպելք» ծանոթ խորագրի տակ գրտնում ենք հետևյալ տասն առակը.

Իթ (ա). Անքաղաքավարի էջը

յ (բ). Անցվորականքն ու Շունը

լա (գ). Ալապստրակը ֆորս անելիս

լբ (դ). Կատուն ու Մուկը

լգ (ե). Եզն ու Շունը

լդ (զ). Զաղրի շունը ու Ֆիլը

լե (է). Մառը [ցանկում՝ Մառն]

լզ (ը). Գելն ու Գառը

լէ (թ). Առյուծն ու Մոծակը

լը (ժ). Արտուտը իր ձաղերովը ու Երկրագործը [ցանկում՝ Արտուտն ու Երկրագործը].

Վաղուց պարզված է, որ առնվազն հինգը (լ, լա, լդ, լզ և լէ) թարգմանություն կամ փոխադրություն են Ի. Ա. Կոիլովի համանուն առակների («Прохажие и Собаки», «Заяц на ловле», «Слон и Моська», «Волк и Ягненок», «Лев и Комар»), երկուսը (իթ, լե)՝ Ի. Ի. Խեմնիցերի («Осел невежа», «Дерево»), մեկը (լը)՝ Դմիտրիևի («Каворонок с детьми и Земледелец»), իսկ երկուսի («Կատուն ու Մուկը», «Եզն ու Շունը») աղբյուրը դեռ անորոշ է: Ենթադրվում են ժողովրդական նյութեր («Կատվի խաղը՝ մկան մահ է» առածը և Վարդանի «Եզ ու Զի» կամ Եզովպոսի «Կով և Շուն» առակները)¹⁷, բայց չի բացառված նաև XVIII—XIX դդ. ուսումնական գրքերից որևէ մեկի հեղինակությունը:

Ի՞նչ սկզբունքներով են օտար հեղինակների առակներն ու բարոյախոսական այլաբանությունները թարգմանվել հայերեն և ի՞նչ ուղիներով է ընթացել նրանց հայկական համարժեքների ստեղծումը:

Արդեն նշվեց, որ թարգմանական 15 առակներից յոթի հեղինակը Ի. Ա.

¹⁷ Ութ առակի աղբյուրը պարզված է դեռ 1934 թ. (Խ. Արքայան, Պարապ վախտի խաղալիք, Մոսկվա, 1934, էջ 340—342): Աս. Ասատրյանը, չգիտես ինչու, առարկելով իր նախորդին՝ դրանք կոչել է «ստեղծագործական թարգմանություն» կամ «փոխադրություն» (Ե II, էջ 362—364), իսկ առանձին դեպքերում էլ՝ լոկ մշակում կամ օտար սյուժեի օգտագործում, որ բացահայտ սխալ է: Արքայանը, որբան էլ ինքնատիպ, այնուամենայնիվ, այդ գործերի թարգմանիչն է, բայց ո՛չ հեղինակը:

Կոիլովն է, չորսինը՝ Ի. Ի. Խեմնիցերը և մեկինը՝ Ի. Ի. Դմիտրիևը, իսկ լեզուն, որով գրել են նրանք, բնականաբար, ռուսերեն։ Արքովյանական թարգմանությունների բաղդատումը ռուսերեն համապատասխան բնագրերի հետ¹⁸ ցույց է տալիս, որ նա հարազատ է մնացել օտար հեղինակների ստեղծագործությունների ոգուն՝ որևէ փոփոխություն չմտցնելով առակների ինչպես պատմողական մասերի, այնպես էլ հանգուցի լուծման և այլաբանական կերպարների կազմի ու բախման շարժառիթների մեջ։ Ավելին, անգամ այն դեպքում, երբ բնագիրն ակնհայտորեն շտկում է պահանջել, Արքովյանը նման ազատություն իրեն թույլ չի տվել։ Օրինակ. հայտնի է, որ նապաստակները միս չեն ուտում, մինչդեռ Կոիլովի «Заяц на ловле» («Ալապստրակը ֆոթոս անելիս») առակում նապաստակն ուղում է կտրել-տանել արջի ականջները, իբրև իր բաժին։ Արքովյանը անփոփոխ պահել է այս հակաբնական իրողությունը, որը մատնացույց է արել դեռևս ռուս ստակագիր Ա. Ե. Իզմայլովը (1779—1831)։

Ինչ վերաբերում է բանաստեղծական տողերի փոխադրությանը, օգտագործված բառերին ու ոճական համարժեքներին, ապա այս խնդիրներում Արքովյանը բավականաչափ իրեն ազատ է զգացել և ջանացել է, որքան կարելի է, թարգմանական առակները մոտեցնել ինքնաստեղծ «ասացվածքների» կամ «առասույլների» բառամթերքին ու լեզվաոճական հնարներին, երբեմն էլ առակի բարոյախոսությունը ավելի դյուրամբունելի դարձնելու, այս կամ այն իրավիճակն առավել ընդգծելու համար աննշան շեղումներ կատարել և արևելցուն յուրահատուկ ծաղկուն ոճի ու շրջասացությունների դիմել՝ թանձրացրել գույները կամ կուտակել հոմանիշներն ու համեմատությունները, պարզ մակդիրների կամ բառ-հասկացությունների փոխարեն համազոր դարձվածքներ ավելացրել, ուրիշ մերթ ստորագրասական (որոշիչ և այլ կարգի) նախադասության ձևով են արտահայտվում, մերթ էլ՝ ծավալուն դերբայական դարձվածքներ։

Առանձնապես երկու առակի մեջ Արքովյանի թարգմանությունը, բնագրի համեմատությամբ, շատ է ծավալուն, ու այդ երկուսն էլ Խեմնիցերի ստեղծագործություններն են («Слепцы» = «Թուռերը», «Дерево» = «Մառը»)։ Իրա պատճառն, անտարակույս, հայ հեղինակի որդեգրած թարգմանական սկզբնականներն են։ Կոիլովյան առակներն, այս առումով, ավելի մոտիկ էին Արքովյանի նախասիրություններին, ընդարձակ շեղումներ կատարելու (լրացուցիչ բնութագրումների ու կրկնությունների) առիթ չէին տալիս, այլ առաջ են քերում բնագրին հարազատ հայերեն համարժեքներ ստեղծելու ձգտում։

Ավելի առարկայական դարձնելու համար մեր խոսքը, զուգահեռ ջնշենք Կոիլովի «Обоз»-ն ու նրա արքովյանական թարգմանությունը՝ «Արաբքը»։

Առաջին վեց բանատողերը թարգմանված են խիստ հարազատ՝ պահպանելով և՛ բառ ու բանը, և՛ հանդարտ, պատմողական տոն, և՛ բնականությունն ու անմիջականությունը (չափի մասին չենք ասում, որովհետև տվյալ դեպքում դա անկարելի էր, անհարիր հայ տաղաչափության ռգում)։

¹⁸ Զեքի տակ ենք ունեցել И. А. Крылов, Басни, հրատարակության պատրաստեց՝ Ա. Գ. Մոգիլյանսկի, Մոսկվա—Լենինգրադ, 1956, И. И. Хемницер, Полное собрание стихотворений, բնագիրն ու ծանոթագրությունները պատրաստեցին՝ Լ. Ե. Բորրովա և Վ. Է. Վացուրո, երկրորդ հրատարակություն, Մոսկվա—Լենինգրադ, 1963, «Стихотворения Ивана Ивановича Дмитриева», 6-րդ ուղղված և փոքրացված հրատարակություն, մասն I և II, Ս. Պետերբուրգ, 1823 (առակներն ամփոփված են Բ մասում)։

С горшками шел Обоз,
И надобно с крутой горы спускаться.
Вот, на горе других оставя дожидаться,
Хозяин стал сводить легонько первый воз.
Конь добрый на крестце почти его понес,
Катиться возу не давая;

Արաբեքումը բարձած կճճներ՝
Գեղըցին կուզեր գնալ դարներվեր:
Մեկեւ ձիանոնցն թողեց սարի գլխին,
Ուզեց՝ որ տանի առ՝ջի արաբին:
Խելոք ձին նրան քամակին տարավ,
Որ չի գլորվի սեւը, ղաստ արավ:

Առարկություն վերցնի, թերևս, «...с крутой горы спускаться» արտահայտությունը «գնալ դարներվեր» թարգմանելը, մանավանդ որ, գոնե ներկա դարասկզբից, Արարատյան և այլ բարբառներում «գարեքվեր» ասելով հասկանում են՝ «ղեպի վեր»¹⁹, մինչդեռ պահանջվում էր՝ սարից նեղք, ցած, դարձվալ: Բայց երևի Արքովյանի օրերում բառն ավելի վերջին իմաստով է գործածվել, այլապես նա, որ հրաշալի գիտեր հայերենի խոսվածքն ու հայոց բառ ու բանը, հազիվ թե նման սխալ թույլ տար:

Բայց ահա՛ բնագրի 7—8 տողերը թարգմանելիս՝ Արքովյանը կարծես լրացուցիչ բնութագրման կարիք է զգում և կոիլովյան տողերին ավելի կենդանություն հաղորդելու նպատակով, թերևս, եռակի ծավալվում.

А лошадь сверху, молодая,
Ругает бедного коня за каждый шаг:
Սարի գլխիցը շահել ձիու մեկն
Որ դեռ ոռնեցումն ուներ բոլոր խելքն,
Ամեն մեկ ոտը փոխելիս՝ անճար
Ձիուն նախատեց, գծվեց շաղաշար:
Թու՛ք ու մու՛ր ու ախպ նրա գլխին ածեց:
Ոռնե՛ր քաղին ծեծելով՝ ասեց.

Այսօրինակ «սազատ» վարվեցողությունը կոիլովյան տողերի հետ իրականում միայն երևութական է: Արքովյանը փոխանակ բառի դիմաց բառ դնելու, ջանացել է տվյալ իրավիճակն ավելի հասկանալի դարձնել հայ մարդուն, նրան մատչելի ու հարազատ դարձվածներով ու շրջաստվածներով է խոսել, նույն միտքը և մակդիրը երկիցս կրկնել²⁰: Բանատողերի այսօրինակ ավելացումից, իհարկե, թարգմանությունը միայն շահել է: Պատկերն, իսկապես, ավելի շարժուն է դարձել, պահի ազդեցության տակ, կատարը տաքացած և ձգտումների ա-

¹⁹ Ս. Ա մ ա տ ու ն ի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 162, սյուն ք:

²⁰ Նկատի ունենք՝ «նախատեց» և «թուք ու մուր ու ախպ նրա գլխին ածեց», «շահել» և «որ դեռ օտներումն ուներ բոլոր խելքն» բառերի ու դարձվածների նույնությունը:

գետավոր հետևանքները ծանր ու թեթև անելու անկարող դեղնակտուցների հոգեբանությունն՝ ավելի դյուրընկալելի:

Արովյանը այս կերպ է վարվել նաև բնագրի հաջորդ 9—21 տողերը թարգմանելիս՝ կոիլովյան բնագիրը դրեթե կրկնապատկելով (13-ի փոխարեն 22 տող):

«Ай, конь хваленый, то-то диво!
Смотрите: лепится, как рак;
Вот чуть не зацепил за камень; косо! криво!
Смелее! Вот толчок опять:
А тут бы влево лишь принять.
Какой осел! Добро бы было в гору,
Или в ночную пору;
А то и под-гору, и днем!
Смотреть, так выйдешь из терпенья!
Уж воду бы таскал, коль нет в тебе уменья!
Гляди-тко нас, как мы махнем!
Не бойсь, минуты не потратим,
И возик свой мы не свезем, а скатим!»

«Հիւ մեր գոված ձիուն նայեց՝ք
Աստված կսիրե՛ք, ի՞նչպես ա, տեսե՛ք՝
Գորդի պես գետնին կպել, ճապաղել,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ամա՛ն, քիչ մնաց մեկ էլ
էդ քարին դիպլի: Ծո՛ւռն է, թե՛ք, ա՛խ՝ թե՛ք:
Ղոշաղ կա՛ց, ղոշաղ: Տո մի մտիկ արե՛ք:
Մեր եզը յաբուն քարին կպավ էլի,
Ա՛յ էդ հաստ գլուխդ փորըդ պրծնի՛:
Ձախ դհիդ վրա՝ ա՛յ տնով քանդված.
Տո է՛շ անասուն՝ ի՞նչ ես մոլորված
Մնացել էդ տեղ: Սարն ըլիս գնում,
էն էլ գիշերը, ո՛վ կըլի զարմանում:
Թե չէ դարձվեր, էն էլ ցերեկը՝
Ի՞նչ դժար քան ա, թո՛ղ ասի մեկը:
Մտիկ անելիս՝ սիրտս պատռվում ա:
Թե քեզանում էլ ուրիշ հունար չկա:
Ջո՛ւ՛ կկրեիր՝ շա՛ռլամիշ էլած,
էդպես սրագալով՝ չէիր գնալ ցած:
Թե սրեն մեզ գա՝ ապա համբերի՛ր,
Ի՞նչպես կթռչինք, դու դարդ մի՛ անիր:
Վախտ չենք կորցնիլ, մեր վրի բռը
Չէ թե կքաշենք, կվազենք դարնըվեր»:—

Դժվար է ասել՝ ո՛ւմ ավելի գերապատվություն պիտի տալ. կոիլովի՞ն, որը ռուսական ոգուն ու բնավորությանը հարազատ այսօրինակ շարժուն ու շոշափելի պատկեր է ստեղծել, թե՞ Արովյանին, որը խորապես հարազատ մնալով բնագրի ոգուն՝ ռուսական գրեթե անթարգմանելի արտահայտությունների հայկա-

կան համարժեքները գտել է նույնքան կենդանի ու առարկայական, որոնցից ամեն մեկը մի-մի գյուտ է: «Смотрите: лепится как рак=Աստված կսիրե՞ք, ինչպես ա, տեսե՞ք՝ / Գորդի պես գետնին կպել, ճապաղել», «А тут бы влево лишь принять. Какой осел=Ձախ դհիդ վրա՝ ա՛յ տոնվ քանդված. / Տո է՛շ անասուն՝ ի՞նչ ես մոլորված / Մնացել էդ տեղ», «А то, и под-гору, и днем=Թե չէ դարկվեր, էն էլ ցերեկը՝ / Ի՞նչ դժար բան ա, թո՛ղ ասի մեկը» և այլ զուգահեռները մեր ասածի պերճախոս վկայություններն են և ամեն գովեստից վեր:

Բնագրի հետագա 7 տողերի մասին (22—28), որոնք գրեթե բառացի են թարգմանված և առանց միջամտության, ասելիք չունենք, եթե չհաշվենք առանձին պարզ բայաձևեր, ըստ սովորության, հարադիրներով ու համադր դարձվածներով փոխարինելը, որ Արարատյան բարբառի ու մյուս ժողովրդական խոսվածքների, ավելի ճիշտ՝ ժողովրդական կենդանի մտածողության յուրահատկություններից է: Մանավանդ որ դրանք չափազանց հարմար են մեծախոս, բայց և ամենահասարակ գործի մեջ իրենց լիակատար անճարակությունը հանդես բերող մարդկանց բնութագրելու համար:

Тут, выгнувши хребет и понатужа грудь,
Тронулася лошадка с возом в путь;
Но только под-гору она перевалилась.
Воз начал напирать, телега раскатилась:
Коня толкает назад, коня кидает в бок;
Пустился конь со всех четырех ног
На славу;

էս տեղ շունչ քաշեց, դռը գուզ ցցեց,
Ու ճամփա ընկավ, ջուր տու էշի առեց
Հենց իր տեղիցն թռավ, ընկավ դարնըվեր,
Բեռը լիւլիկաց, սելը դես ու դեն՝
Մեկ առաջ քցեց ձիուն, մեկ եզր:
Ծառը ու կտրվեց, մեր դռչաղ էս ձին
Չորս ոտն վեր առավ. հա՛յդե՛ գնաց քեֆին:

Արուսյանի կողմից ներմուծված՝ «Չուր տու քշի արեց» դարձվածը, ուսաց «Пустился конь со всех четырех ног / На славу» արտահայտությունը հայերեն «Ծառը որ կտրվեց, մեր դռչաղ էս ձին/Չորս ոտն վեր առավ. հա՛յդե՛ գնաց քեֆին» բառակապակցությամբ թարգմանելը արդեն բացահայտված սկզբունքների հաջող կիրառման նոր օրինակ են, չափազանց ինքնատիպ փոխակերպություն, որպիսին միայն առաջնակարգ թարգմանիչներն են ի վիճակի գտնելու: Առակի եզրափակիչ տողերը թարգմանության մեջ նորից են աճել՝

По камням, рытвинам, пошли толчки.
Скачки,
Левей, левей, и с возом — бух в канаву!
Прощай, хозяйские горшки!

Աստված հաջողա՛ նրա բանն՝ ախպե՛ր,
Էլ ինչ էդ պատմեմ նրա տիրոնչ ցավերն:
Քարով, քարափով ընկավ շարդվելով,
Չափ քշեց ու գու քաշեց՝ գնալով՝

Ընկալ շորս ոտովն մեկ խանդակի մեջ,
 էլ ի՞նչ կամար սաղ սալամաթ հեշ:
 Գլուխդ ապրի՜ կեցե՛ն տեր:
 Էլ ի՞նչ կսենեն քեզ նրանք ախր խեղ:

Աճել է նաև բարոյախոսությունը (շորս տողի դիմաց՝ վեց)։

Как в людях многие имеют слабость ту же:
 Все кажется в другом ошибкой нам;
 А примешься за дело сам,
 Так напроказишь вдвое хуже.

էս աշխարքումն էլ էս ջուռա մարդիք
 Շատ կան, Խաւնցից ունին մեծ կարծիք:
 Ուշի արածին միշտ չեն հավանում,
 Բայց երբ որ բանը իրանց է մնում,
 Ձուկն ու մածունը իրար են խառնում
 Տասն էնքան՝ բանը խժժում, մժժում:—

Բայց երկու դեպքում էլ այդ աճը միմիայն ավելի է ամրապնդել ու տիրական դարձրել ժողովրդական շունչն ու ոգին: Աբովյանի և՛ խոսքն է կենդանի, և՛ օտար խրատաբանությունը հայի համար դարձել է, հիրավի, չափազանց հասկանալի և ուսանելի:

Բնագրի և թարգմանության բաղդատությունը ի հայտ է բերում ո՛չ պակաս ուշագրավ մի այլ իրողություն ևս: Որքան էլ առակը հեղինակից պահանջում է նյութի մատուցման ծանր ու անբռնազրոսիկ ոճ, դիտումնավոր թե իր կամքից անկախ, թարգմանության ընթացքում Աբովյանն ինչ-որ տեղ, կարծես աննկատելիորեն, շեղվում է հանդարտ-պատմողականության հունից և բանատողերը պարուրում քնարական շղարշով, թեպետև այդ հայեցակետից վերընթերցելով նրա թարգմանությունները, դժվար է ճշտորեն որոշել՝ ո՞րտեղ է վերջանում լիաթոք ծիծաղը կամ վիրավորված ինքնասիրության ցասկոտ բողոքը, ո՞րտեղից սկսվում մեղմ քնարականությունն ու անկեղծ կարեկցանքը: Բայց սա Աբովյանի ստեղծագործական խառնվածքի էությունն է, Աբովյան-առակագրի ոճը կամ հանճարի դրոշմը, որ փոխել կամ եղծել անկարելի է: Այս երևույթը նկատվում է «Պարապ վախտի խաղալիքի» թարգմանական բոլոր հատվածներում՝ ավելի կամ պակաս ընդգծվածությամբ, նայած վերատադրվող դեպքերին կամ նրանցից բխեցվող բարոյախոսությունը²¹:

²¹ Այս առումով ուշագրավ է նաև Խենիցիերի «Дерево» առակի թարգմանությունը, որտեղ «Счастливо,—говорит,—Дерева те, которые в долине! Их буря столько не вредит» չափազանց առարկայական ու ամփոփ տողերի փոխարեն ունենք հովվերգությամբ պնդադարձված մի ամբողջ տեսիլք.

Երանի՜ նրանց՝ որ ձորի միջին
 Ա՛խ՝ դուռ են էկել ու էլ դարդ չունին:
 Էն սա՛ռն աղբրի, էն հով ջվաքի,
 Էն կանաչ խոտի, ու սիրուն ծաղկի
 Վրեն ու միջումն՝ շորս կողմը բռնած,
 Դինջ, անմեղ՝ խնդան արևովն իրանց:
 Ո՛չ քամին նրանց ձեռը կխփի,
 Ո՛չ արև՝ քոքն ու տերևներն կէրի (Ի 11, էջ 270—271):

Իսկապես էլ՝ Արքովյանի խոստովանությունը, թե՛ «թարգմանածներս էլ՝ էնպես եմ դուս բերել, որ մեր խուլիսի սրտովն ըլի», — սովորական մերկապարանոց հայտարարություն չէ, այլ կատարված իրողության ճշմարտացի բնութագրում, որ կարելի է հաստատել բազմաթիվ օրինակներով։ Ավելին, եթե հեղինակի սույն վկայությունը և նրա գրական ժառանգության հետազոտողների բանասիրական հետաքրքրասիրությունը չլինեին, հազիվ թե անհրաժեշտություն դառնալու ինքնուրույն ու թարգմանական առակներն իրարից զատելու կամ էլ նրանց օտար երկվորյակները մատնացույց անելու։

Ռուս հեղինակների առակները ներառնելով իր ժողովածուի մեջ և դրանց այլաբանությունը ծառայեցնելով հայության կյանքի լույսն ու սովերը վեր հանելուն, Արքովյանը առանձին կարեկրություն չի տվել, թե իրականում նրանց ծնունդ տվողն օտար ափերի ի՞նչ հողմեր են եղել, Ռուսաստանի անցյալի կյանքի ինչ կողմեր կամ դիպվածներ են նրանց գրության համար ազդակ ծառայել։

Ամբողջ «Պարապ վախտի խաղալիքում» միայն «էշն ու Բլբլույն» ունի գրության շարժառիթների մասին հեղինակային նախաբան (արձակ), մնացած ինքնուրույն ու թարգմանական առակներից և ո՛չ մեկին չի՝ ուղեկցում որևէ բացատրական, մինչդեռ դրանք հայ ընթերցողի համար նվազ ուսանելի չէին լինի։

Հայտնի է, որ «ՕԾՕ3» («Արաբեքը») առակի հորինման առիթը (տպագրվել է 1812 թ.) նախդիտնի դեմ մղված հայրենական պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատար Մ. Ի. Կուտուզովի մասին արքունիքում և գիշավորական բարձր շրջաններում լավող կշտամբանքի խոսքերն ու տրտունջներն են եղել, որ իբր ծերունի ֆելդմարշալը խելքը թոցրել է, ռազմական գործերից ոչինչ չի հասկանում, վճռական գործողությունների դիմելու փոխարեն լքում է գլուղ ու քաղաք իրար հետևից, առանց ճակատամարտի թողել է մայր Մոսկվան, և եթի այդպես շարունակվի, ապա շատ-շուտով Պետերբուրգն էլ պիտի հանձնվի թըշնամուն։ Եվ չնայած դրան՝ Կուտուզովը չչեղվեց ֆրանսիացիների դեմ մարտ վարելու իր նախորդած ծրագրից, չզայթակղվեց անփորձ դեղնակապույտների անմիտ շաղակրատանքներից, իսկ դա շատ-շուտով ֆրանսիացիներին կանգնեցրեց լիակատար պարտության առջև և հարկադրեց փախչել Ռուսաստանից, մինչդեռ հակառակ ուղին կլինեի կործանումն Ռուսիայի և ռուս ազգի։ Կուտուզովի «Արաբեքն» այլաբանական վերաբրտագրումն էր այս իրողությունների և շուրջալից ապտակ աղմկարար հայրենասերների²²։

1812 թ. Հայրենական պատերազմը միշտ էլ Արքովյանի հիացմունքն է շարժել, և 1841 թ. գրած «Վերքի» եզրափակիչ էջերում, ինչպես նաև «Ֆեոդորայի» Հառաջաբանում կատարել է ուշագրավ համեմատություններ ու զուգահեռներ։

«Արաբեքն» առակը թարգմանելու առիթով, թվում է, Արքովյանը չպիտի կարողանար իրեն հտ պահել գայթակղությունից և գեթ տողատակի մի ծանոթությամբ իր վերաբերմունքը չարտահայտեր, բայց նա այդ բանը չի արել, որովհետև պիտի ոտնահարեր սուակի իր իսկ ըմբռնումը, որի խորհուրդը ընթերցողին զվարթ տրամադրությամբ վարակելով չէր սպառնում։

Առակն Արքովյանը դիտում էր որպես բարձրագույն ընդհանրացում, հավիտենական ճշմարտությունները այլաբանական կերպարների բախման միջոցով

²² В. Кеневич, Библиографические и исторические примечания к басням Крылова, 2-րդ հրատ., Ս. Պետերբուրգ, 1878, էջ 117—118։

հանուրին հաղորդելու ձև, դժվարին կացությունից դուրս գալու կենդանի օրինակ ու խրախույս, իսկ այս պարագայում հայի համար կարևորը ո՛չ այնքան կուտուզովը կամ նրա հակառակորդներն էին, որքան ազգորեն համախմբվելու կարոտ մի ժողովրդի հասկացնելը, թե մտածված, տևական ու հետևողական զործունեությունն ավելի կարևոր է կյանքում, քան անմիտ ու անհող խոյանքները, Կոիլովյան սուական, այսպիսով, Աբովյանի լուսավորական ուղեգծի ճշտություն հաստատումն ու հիմնավորումն էր դառնում և ստանում էր նոր մեկնաբանում:

Այլ դեպքերում էլ ռուսական առականների հայկական կերպավորումները ավելի լայն ու խոր ընդհանրացում են սլարոնակում, քան դրանց բնագրում մատնանշած բարոյախոսությունը: Օրինակ՝ «Ճգնավորն ու Արջը» առակն, ըստ ռուս հեղինակի մեկնաբանման, հսկաստամն է այն առանին «փիլիսոփայություն», թե «խաթրապահ հիմարն թշնամուց վատ է», մինչդեռ աբովյանական թարգմանական քուրալի միջով անցնելով, այն դառնում է յուրատեսակ ողբերգություն մարդու և բնության ներդաշնակության խախտման և երբեմնի երանությունը վերագտնելու անկարելիության համար:

Իրենց հորինվածքներով՝ ձևական-կառուցվածքային հատկանիշներով, Աբովյանի առակները որևէ քարացած սկզբունքի չեն հետևում, բայց և չեն խորշում (ավելի ճիշտ՝ մերձենում են) ռուս և եվրոպական առակագիրների ստեղծագործական փորձից, որոնք վաղուց հայտնադործել էին ընթերցողի ձանձրության փարատելու և միապաղաղությունից խուսափելու գաղտնիքը:

Տաղաչափական գյուտեր Աբովյանի առակներում, զրեթե, չկան: Ամենուր (և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական առակներում) տասը վանկանի յամբ-անայեսայան երկհատած բանատողեր են²³, բայց անհրաժեշտության դեպքում այնպիսի վարպետությամբ են դրանք եզրափակվում կարճ բանատողերով, կամ էլ՝ հանդարտ պատմողականությունից անցում կատարվում դեպի աշխույժ տրամախոսությունները, որ ոտանավորին հաղորդվում է և՛ շարժունություն, և՛ ավարթացնող ոգի²⁴:

Աբովյանի հայ նախորդներից ո՛չ մեկի մոտ այս բանը մենք չենք դռնում, էլ չենք ասում, որ նրանց որդեգրածը առականների կառուցվածքի քարացած ձևվերն են: Օրինակ, Մինաս Բժշկյանցի թարգմանած եզովպոսյան բոլոր առակներն էլ սկսում են աշխարհաբար և զրաբար չափածո բնաբաններով, որոնց հաջորդում է առակի պատմողական մասը, աշխարհաբար արձակ շարադրանքով ու դա էլ եզրափակվում՝ զրաբար, չափածո բարոյախոսությամբ:

Աբովյանին խորթ են այսօրինակ կաղապարները: «Պարապ վախտի խաղալիքի» մասնավորապես առաջին երկու բաժիններում, ուր նրա ինքնուրույն հորինվածքներն են համախմբված, առականների այլաբանական կեղևը բաց է

²³ Իրականում, Աբովյանի բանաստեղծական խոսքի մեջ (Արարատյան բարբառի ազդեցությամբ, անշուշտ) բազմաձևակ բառերի շեշտը, շատ հաճախ, վերջընթեր վանկի վրա է ընկնում, հետևաբար և պնդել, թե նրա գերազասածը յամբ-անայեսայան երկհատած բանատողերն են, ճիշտ չի լինի, մասնավորապես խառը ոտքերի օրինակներն ևս քիչ չեն: Ըստ այդմ՝ յամբի (մեծավերջ) փոխարեն հանդիպում է քորբի (մեծասար), իսկ անայեսայի (վերջատանջ) փոխարեն՝ ամֆիրրառա (քողաղոտ):

²⁴ Իրևու անգամ, այն էլ թարգմանությունների մեջ ու, երևի, բնագրի տաղաչափության թելադրանքով՝ Աբովյանն առակը սկսել է 8-վանկանի յամբական տողերով («Բաղդատի ճամփորդ էջը», «Առյուծն ու Մոծակը»), բայց մի քանի տող հետո նորից անցել 10-վանկանի յամբ-անայեսայան բանատողերի:

արվում կամ հենց սկզբում, իբրև բնաբան բերվող մեկ-երկու տողանոց առած-ասացվածքների միջոցով, կամ էլ՝ առակն հզրափակող տողերի, որոնք մեծ մասամբ իմաստալից բանքեր կամ աֆորիստիկ արտահայտություններ են²⁵։ Առաջին դեպքում առակի պատմողական մասը կարծես թե դառնում է բնաբանի յուրօրինակ մեկնաբանություն, տվյալ առած-ասացվածքի մեջ ամփոփված հավիտենական ճշմարտությունը մեկ անգամ էլ հավաստելու միջոց, որի լավագույն օրինակներն են «Երկաթակեր մուկն ու աղքատ հարուստը», «Ձու գողացողը», «էշն ու Բլբլուլը» և այլն։

«Փո՛ղն ա բան տեսնում էս մեր աշխարհումն,
Գեղըցու խոսք ա, հո ես չե՛մ ասում»։

«Ձուն գողացողը ձի կըգողանա-
Թո՛ղ լսողն գլխին լավ մուղաթ կենա»։

«էշն ի՞նչ գիտի վարդն ի՞նչ զատ ա,
Նրանը փալանն սւ թավալ տալն ա»։

Երկրորդ դեպքում՝ հենց սկզբից, առանց նախաբանի ծավալելով գործողությունը կամ բախման մեջ դնելով առակի այլաբանական կերպարներին, դեպքերը բնականոն ձևով հանգեցվում են մի վախճանի, որն, ըստ էության, ո՛չ միայն դաստիարակող է մարդու համար, այլև առիթ՝ համապատասխան բարոյախոսական հզրահանգման։ Սրանցից են «Բաքմազ ծախողն ու Սալդա-տը», «Ժանդ փուշը», «էշն ու Շունը» և այլն։

«Բանն ընչանք բանի վերջը կհասնի,
Գողը՝ քարավանը կըտա, կըտանի»։

«էսպես տուն քանդող փշեր խիստ շատ կան,
Երանի՛՜ նըրանց մեկ օր կրակին տան»։

«Մարդի առաջին քանի որ կուչ գաս,
Գըլխիդ կընստի, թե լավ իմանաս»։

Հաստուկ դիտավորությամբ վերաքննել, թե ինչո՞ւ Արտվյանն, ասենք, այս առակն այսպես է կառուցել, մյուսն՝ այնպես, ավելորդ է։ Նյութն ինչ թեւադրել է, նրանով էլ ղեկավարվել և համապատասխան բարոյախոսությամբ սկսել կամ հզրափակել է առակը, ամեն անգամ ունենալով մի նպատակ՝ որքան կարելի է դյուրեմկալելի դարձնել ընթերցողին իր համակրանքն ու հակակրանքը, իր բաղձանքը, իր լուսավորական պատգամը, զգուշացնել ու զգաստացնել նրան շարիքից ու շարագործներից և առաջնորդել բարոյական կատարելության մայրուղով։

Թարգմանական առակներից մեկի մեջ միայն Արտվյանն ավելացրել է բարոյախոսական վերջաբան, ավելի ճիշտ՝ գրվածքի պարզ հզրահանգումը վերջստին կրկնել է, այն էլ՝ բավական անհաջող, որի պատճառը, թվում է, ո՛չ այնքան տվյալ բարոյախոսություն՝ հայի համար խրթին լինելն էր, որքան հայ-

²⁵ Առակներից միայն մեկն ունի և՛ բնաբան, և՛ բարոյախոսական վերջաբան («Երկաթակեր մուկն ու աղքատ հարուստը»), որ սակայն գրվածքի տրամաբանական վախճանն ավելի համոզիչ դարձնելու համար է արված, իսկ «Լուրցիք» շարքը, նաև՝ «Ջարմանալի մարդիքը» շունեն և՛ մեկը, և՛ մյուսը։

կական իրականացման մեջ կատարված (և Արժույթի վրա տհաճ տպավորություն թողած) ինչ-որ դեպք, որը վերականգնանացել էր նրա հիշողության մեջ տվյալ առակը թարգմանելիս²⁶:

Անդրադառնալով Արժույթի առակների ու շախմատ զվարճախոսությունների այլաբանական կերպարներին, հարկ է նշել, որ դասային (դասակարգային) չմտնում, իսկական իմաստով, նրա մոտ չկա, այլ լոկ ազգի ու ժողովրդի բաժանումը գյուղացիների ու քաղաքացիների, իսկ սրանց ներսում՝ ազնիվ աշխատավորների ու շար հարստահարողների, ըստ որում հեղինակի համակրանքը ամեն դեպքում առաջինների կողմն է:

Հիշյալ ստեղծագործությունների այլաբանական կեղևի տակ պատենպվորված են աշխատասեր ու բարոյություն անող հողագործներ (առակ իա), բնական օրենքով կառավարվող կամ բնատնտեսական կյանքով ապրող գյուղացիներ համայնքի անդամներ, որոնք իրենց բարձր են դասում քաղաքակրթված հասարակչությունից (է), մի կտոր հաց վաստակելու համար քաղաք թափված և պարզամտության պատճառով սուտապող պանդուխտ հայեր (թ), խավարի թաղավորության մեջ ոտնատակ տրվող գեղեցիկ հոգիներ (իգ) և սրանց հակառակ՝ շար ու տգետ դաստիարակներ (իա), որդիներին աստիճանաբար հանցագործության մղող կարճամիտ ծնողներ (օր), խորամանկներ ու խարդախներ (գ), քաղաքակրթության միայն այլանդակությունները յուրացրած մոլեռանդներ (դ), իրենց մեծ կարևորություն տվող ոչնչություններ (ժթ), փողի առջև ստորացողներ ու կրեպաչաշտներ (զ), ազահ կուտակողներ (ժգ), իրար կոկորդ կտրող վատեր ու վատթարներ (ժզ), բռնցքի իրավունքով թալանողներ (ժ), բռնակալներ ու հարստահարողներ (ը): Վերջապես՝ պարզ իրադրությունների մեջ կողմնորոշվել չցանկացող «իմաստուններ» (ե), կույր հնազանդության կամ անժամանակագործության պատճառով տառապողներ (ժե և ժը), ճակատագրին գերի պարզամիտ լեռնցիներ, որոնց անհասկանալի են իրենց արարքների ողբերգական հետևանքները (ա): Կարճ ասած՝ XIX դ. առաջին կեսի հայ իրականության մեջ իշխող ավատական կացութաձևի և նորաբողոք քաղցնեհության վատերն ու վատթարներն են սրանք, թուլություններն ու թերությունները, գյուղի և քաղաքի արգահատելի խավերը՝ իրենց անմարդկային արարքներով ու անբանական ընթացքով, ընդ որում երկուսի մեջ էլ «արդարն» ու վայելողը հարուստն է, և տառապողը՝ ընչազուրկը: Հեղինակի նգրակացությունն ամեն անգամ պարզ ու մեկն է. անկարելի է, որ շարիքը հաղթանակի, եթե ժողովուրդն ապրի լուսավորության թագավորության մեջ:

Թարգմանական առակների գործող անձինք ևս հանրության գրեթե նույն խավերի ներկայացուցիչներն են: Ասում ենք՝ գրեթե, որովհետև այս կերպար-

²⁶ Այդ հավելումը Ի. Ա. Կոիլովի «Զադրի շունն և Ֆիլը» («Слон и Москва») առակի թարգմանության մեջ է, որի վերջին՝

«Տե՛ս՝ Զադրի շունն ինչ դուռն է շուն ա,
Որ Ֆիլ վրա էլ հաշի կարում ա...»

տողերից հետո ավելացված է.

«Բաղի բնձոտ մարդ էլ է՛ս ա ասում,
Երբ մեծ մարդի վրա նա իր ձին քշում»,

որ ամենևին էլ «գուտ չի՝ բերել»

ներքո՝ ո՛չ թե կրկնում, այլ խորացնում ու ամբողջացնում են համապատասխան բնավորությունները՝ հնարավորություն տալով ընթերցողին ավելի սթափ հայացքով ու արթուն մտքով քննելու շրջապատի մարդկանց գործերն ու ընթացքը, ավելի լավ ճանաչելու նրանց, քաջություն ունենալ նայելու նաև սեփական հոգու խորքը, հրաժարվելու վատից և ձգտելու ինքնակատարելագործման ու ազնվացման, բարի ու առաքինի գործերի:

Ե՛վ այստեղ է, որ նրանց օգնության են գալիս առակաների ո՛չ միայն այլաբանությունը, այլև նրանցում վերարտադրվող արարքներն ու արարողները:

Ավելորդ է անգամ վիճարկելը, որ դաստիարակիչ օրինակներ չեն կարող դառնալ առանց խելքի ու շնորհքի, նաև՝ համապատասխան կրթության ավելի ու ավելի բարձր դիրքի ու պաշտոնի ձգտող ապաշնորհները, որոնց կործանումը վաղ թե ուշ անխուսափելի է (իդ), թուլյերին ու անգործներին գիշատող և անօգնական մարդկանց տառապանքներից գերագույն բավականություն ստացող հարստահարիչներն ու հանցագործները (լթ, լգ), մեծատունների սեղանի փշրանքներով կերակրվող թուլյերը, որոնք հանդուրժում են ամեն նվաստացում (լա), ամբարտապան ու չարախոս, նախանձոտ ու չարակամ մարդիկ (իթ, լ, լգ), իսկական մեծությունների մասին վայրահաչող շնչինությունները (լդ): Արգահատելի են անգամ անորոշության մեջ խարխալող բնության պարզ գավակները, որոնք հեռանալով բնության օրենքից՝ իրար կոկորդ են պատռում, իրար արյուն թափում՝ իրենց մուլար աղանդի գերապատվությունը հավաստելու համար (իզ):

Ժամանակն էր լայն ասպարեզ տրամադրում այսօրինակ չարագործներին, և Արուվյանը օտար հեղինակների բերանով դատապարտում էր այդ ժամանակը, առանց ծածկելու իր համակրանքն ու հակակրանքը, կոչ անելով մարդկանց՝ մոռանալ չնչին կրքերը, ճանաչել իսկական լուսավորության ուժն ու զորությունը, մտածել իրենց անհետաձգելի պետքերն ու կարիքները բավարարելու մասին, ընթանալ բանականության շավղով, չգայթակղվել երևութական հրապուրանքներով, հույսը դնել սեփական բազկի զորության վրա, չխուսափել ազնիվ աշխատանքից, չչեղվել առաքինի ընթացքից:

Թարգմանական առակաների մեջ ևս մի անգամ է միայն հանդիպում միապետի կերպար (լէ), այն էլ ավելի թափալորի ուշադրությունը իր հպատակների վրա հրավիրելու, վերջինների մեջ մարդը տեսնելու, նրան ևս հատուկ արժանապատվության բարձր զգացումը ճանաչել տալու համար, քան միապետական կարգերը դատապարտելու կամ մերժելու դիտավորությամբ:

Սա լուսավորիչների ընդհանուր մտահայեցությունն էր, և Արուվյանը դեմ չէր գնում դրան:

СБОРНИК Х. АБОВЯНА «РАЗВЛЕЧЕНИЯ В ЧАСЫ ДОСУГА»

II. О. АКОПЯН

Резюме

Данный сборник басен, притч и лирических стихотворений является уникальным в творчестве великого армянского просветителя-демократа Х. Абовяна, в котором он решает сугубо композиционные вопросы.

В баснях и притчах автор пытается исследовать анатомию армянской действительности 30-ых гг. XIX в., а в лирических отрывках выражает собственные стремления и разочарования. Басни и притчи подразделяются на два основных раздела: оригинальные и переводные, которые в свою очередь подразделяются на басни естественные и сочиненные и басни мифические.

Действующие лица басен и притч естественных и сочиненных — люди, а мифических — животный и растительный мир. По своему композиционному построению басни Абовяна перекликаются с баснями великого армянского баснописца средневековья Мхитара Гоша (около 1130—1213 гг.).

В переводных баснях (Крылова, Хемницера и др.) Абовян старался сохранить и передать основную идею оригинала, по мере возможностей оставаясь близким к тексту, но несмотря на это, переводные басни в его стилистической обработке во многом созвучны мышлению армянского народа благодаря использованию в них народно-разговорных элементов.

Переводы Абовяна сделаны так мастерски, что их трудно отличить от собственных творений автора.